



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

27 հունվարի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի

Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի

Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Կարապետ Հաջիյանի անհատական դիմումով գործը
քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Կարապետ Հաջիյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2015 թվականի հունվարի 13-ին)՝ խնդրելով.

«Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունը, ՀՀ դատական օրենսգրքի 42-րդ հոդվածի 5-րդ մասը եւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին

մասի 2-րդ կետը, 162-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերը ճանաչել ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր»:

Դիմողը գտնում է, որ, մասնավորապես, վիճարկվող նորմերը դատարանների կողմից մեկնաբանվել եւ կիրառվել են յուրովի, որն անընդունելի է եւ չի բխում այդ նորմերի բովանդակությունից ու օրենսդրի կամքից՝ խախտելով իր սահմանադրորեն երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով եւ ելնելով խնդրո առարկա անհատական դիմումի եւ կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքներից, գտնում ենք, որ դիմումի հիման վրա գործի քննությունը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման հետեւյալ պատճառաբանությամբ. դիմումին կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմող Կարապետ Հաջիյանի նկատմամբ վերջնական դատական ակտը՝ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը կայացվել է 2013 թվականի հունիսի 5-ին: Դիմումին կից ներկայացված ՀՀ վճռաբեկ դատարանի մյուս որոշումները, մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 1-ի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը, ինչպես նաեւ 2014 թվականի նոյեմբերի 19-ի՝ «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումները, կայացվել են ոչ թե Կարապետ Հաջիյանի, այլ Սամվել Հաջիյանի նկատմամբ: Հետեւաբար, սահմանադրական դատարան դիմելու համար «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված 6-ամսյա ժամկետը պետք է հաշվել հիմք ընդունելով ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թվականի հունիսի 5-ի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը: Այս համատեքստում, գտնում ենք, որ դիմողը չի պահպանել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված 6-ամսյա ժամկետի պահանջը:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետով, ինչպես նաեւ 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Քաղաքացի Կարապետ Հաջիյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

27 հունվարի 2015 թվականի
ՍԴԴԿՈ/1-4